# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6–րդ կետի ա. ենթակետի ՝ Հայաստանի Հանրապետության ՆԳՆ որոշեց.

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024ՀԴՁ3-3 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ին ներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի՝ պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Եթե գնման ընթացակարգը կազմակերպվել է չափաբաժիններով, և ընտրված մասնակցի հետ կնքված պայմանագիրը ներառում է մեկից ավելի չափաբաժիններ, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Որոշման հիմք է հանդիսանում ծանուցում ստանալուց հետո՝ 5 օրացուցային օրվա ընթացքում, սահմանված տույժ ու տուգանքը ՀՀ ՖՆ գործառնական վարչության հաշվեհամարներին չվճարելու հանգամանքը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՀՀ ՆԳՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. ՓԻԴԱՆՅԱՆ

« 10 » « 12 » 2024թ.

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| ***«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ*** | **03804898** | ***ՀՀ Արարատի մարզ քաղաք Մասիս 1 փողոց*** | | **Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6–րդ կետի ա. ենթակետի** | | **ՀՀ ԷԿԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՃՇ2024ՀԴՁ3-3 Պատվիրատուի ղեկավարի «10» «12» 2024թ. որոշման համաձայն** |